Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին «Գանձատուն» թանգարան, որից հետո, ի պատիվ մեծարգո հյուրերի, Վեհարանի ճաշասրահում ընթրիք տրվեց: Ընթրիքի ընթացքում Նորին Սրբությունը հանդիսավորապես, Հայրապետական կոնդակով, պարոն Տիգրան Իզմիրլյանին շնորհեց Սբ. Էջմիածնի բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը (տե՛ս էջ 131):

Ընթրիքին ներկա էին նաև Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, Հոգևոր Ճեմարանի տեսուչ Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանը, աստվածաբանական ֆակուլտետի դեկան Շահե Արքեպիսկոպոս Անեմյանը և գեներալ Մ. Պետրոսյանը:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հունիսի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի Հանրապետության զինված ուժերի պատվիրակությունը՝ Ազգային Պաշտպանության գլխավոր շտաբի պետ, գեներալ Աթանասիոս Զուգանիսի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիոսը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Միխայել Հարությունյանը, երկու երկրների բանակների մի շարք բարձրաստիճան սպաներ: Պատվիրակությանը Վեհարանի իր տշխատասենյակում ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնելով այդ այցելության համար, ընդգծեց հայ և հույն ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը, երախտագիտությամբ շեշտեց այն հանգամանքը, որ Հունաստանն այն երկրներից մեկն էր, որ 1915 թ. Մեծ եղեռնից հազիվ մազապուրծ հայ ժողովրդի գաղթական զավակների համար եղավ փրկության առաջին օջախներից մեկը: Մեր ժողովուրդը երբեմ չի մոռանում դա, և մեր երկրների, եկեղեցիների և ժողովուրդների համագործակցությունը այսուհետև պիտի է՛լ ավելի խորանա և զարգանա թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական ասպարեզներում:

Գեներալ Աթանասիոս Զուգանիսը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ Հունաստանի զինված ուժերի պատվիրակության սույն այցելությունը հանդիսանում է հույն ժողովրդի եղբայրական ջերմ սիրո և զգացմունքների արտահայտությունը հայ ժողովրդի հանդեպ: Կարևորելով Հայ Առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքի հատկապես այս անցումային դժվարին ժամանակաշրջանում, մաղթեց Վեհափառ Հայրապետին առողջություն, հաջողություններ և ամենայն բարիք:

Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ ներկայումս մեր եկեղեցին մի նոր վերազարթոնք, վերածնունդ է ապրում, և այժմ Հայ եկեղեցու համար խիստ կարևոր ու կենսական խնդիր է երիտասարդ հոգևորականների պատրաստումը և հայ ժողովրդի դաստիարակությունը Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթներով: Նորին Սրբությունը կարևորեց նաև Հայ և Հույն եկեղեցիների համագործակցությունը և խնդրեց իր ողջույնները փոխանցել Հույն եկեղեցու պետին:

Հանդիպման ավարտին պատվիրակությունը շրջեց Մայր Աթոռի թանգարաններում և ծանոթացավ հայ հոգևոր արվեստի և մշակույթի գանձերին: